



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2018թ. հունվարի 19

N 8 -Ա

2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՎՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ԶՄԵՌԱՅԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի և 1.14 կետի <<բ>> ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով 2017 թվականին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային աշխատանքների համար հատկացված 148 8000 000 ՀՀ դրամը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի 163.9 կմ ավտոճանապարհի ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային աշխատանքների համար հատկացնել 36 787 850 ՀՀ դրամ:
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանի 115.8 կմ ավտոճանապարհի ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային աշխատանքների համար հատկացնել 40 361 126 ՀՀ դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի 58.5 կմ ավտոճանապարհի ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային աշխատանքների համար հատկացնել 37 275 154 ՀՀ դրամ:
4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածի տարածաշրջանի 51.2 կմ ավտոճանապարհի ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային աշխատանքների համար հատկացնել 34 375 870 ՀՀ դրամ:
5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Հ.Ղոնախչյանին՝ ամենօրյա հսկողություն սահմանել մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային աշխատանքներին և պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ Մ.Աբգարյանի վրա:

Լ. ՍԻՄՈՆՅԱՆ